

## ԴԻՑԱՐԱՆԱԿԱՆ

**ՔԱՐԻ ՊԵՏՑԱՄՈՒՆՔԸ ՀԱՅԵՐԻ ՄԻԶ**

Զ.

(Շարունակություն:)

Այս հաւատալիքի մէջ բնորոշ գիծն այն է, որ մանկանց հիւանդութիւնները բժը կող ժայռ-քարերը, բոլորը էլ «ծակ քարեր» են: Այս հանդամանքը մի անդամ եւս ապացուցում, որ ընդհանրապէս «ծակ քարերը», ըստ ժողովրդական հաւատալիքների, սովորաբար մանկանց հոգիների ապաստանի նշանակութիւն են ունեցել, ինչպէս մասնանշել ենք նախորդ գլուխների մէջ եւս, երբ խօսք եղաւ կանանց յղութեան հետ առնչող հաւատալիքների մասին ու աւստրալիական «էրատիպա»յի նկատմամբ:

Այսուհետեւ յիշատակելի են զանազան հիւանդութիւնների դէմ յայտնի քարերը, որոնց կարելի է հանդիպել չայտատանի ամէն մի քայլափոխում: Վասպուրականում՝ ջերմ ունեցողները ուխտ են գնում Սնգդա Ա. Քարին, իսկ մէջքացաւով տառապողները — Մոգի Քարին. Գանձակի գաւառում ուխտ են գնում մեծ գոմերի քարին՝ աշքացաւ, վոսկերելին՝ փորացաւ, Սուրբ Նշանին՝ գլխացաւ, Գետաշէնի խաչին՝ մկնատամ ունեցողները: Բորչալուի գաւառում «Դողի խաչ» անունով սեւ մեծ քար կայ, որ պաշտում է իրեւ ջերմի բուժիչ: Շատ վայրերումն էլ կան յատուկ քարեր, որոնք ժողովրդի մէջ յայտնի են իրեւ հիւանդ անտունների բուժիչներ:

Մարդկային բախտը գուշակող քարեր շատ-շատ են տարածուած հայրենակ վայրերում: Գուշակութեան երեք ընդհանրացած ձեւեր ենք գտնում այդ հաւատալիքների մէջ: Ամենասովորականն այն է, որ խաչքարերին, ուխտատեղիների քարէ պատերին, սուրբ համարուող ժայռերին ու քարերին քսում են կամ կպցնում փոքրիկ քարեր. եթէ վերջինները կպչում են, ուրեմն ուխտը կամ մտածածք կատարելու է, յաջողութիւն է լինելու: Երկրորդ ձեւը կարտանում է նրանում, որ պաշտելի քարերին մէխ են խփում. եթէ գամը ծակում է ու ներս

մտնում քարի մէջ, դա նշան է դրական դուշակութեան: Երրորդ ձեւը համեմատարար մի փոքր քարող է: Վասպուրականում կան «հանդելաքար» կոչուած քարեր, որոնց միջնորդի այսպէս են գուշակում. վերցնում են 4 փոքրիկ քարեր եւ կցում հանդելաքարի վրայ, եթէ այդ փոքրիկ քարերը դասաւորուում են խաչաձեւ, դա նշան է ուխտի կատարուելուն: Գանձակի գաւառում Խաչակապ գիւղի մօտ գտնուում է «խաչ-քրի» անունով մատուռ մէկ խաչքարով. այդ խաչքարի վրայ գցում են մի անգամով 5—10 մանրիկ քարեր, որոնց խաչաձեւ դասաւորուելը «քարի նշան» է:

Բացի վերոյիշեալ համատարած 3 ձեւերից կան նաև տեղական իւրայասուկ տարրեր ձեւեր գուշակութեան: Վասպուրականում Նորդուղի եւ Խոշապի սահմանների մէջ բարձրացող Բալիր լերան գագաթին կայ մէկ դոլմեն. համբարձման տօնին, այսուհետ ուխտ եկողներն իրենց ցանկութիւնների միջձերի կատարումն գուշակելու համար գնում են մատն այդ քարի վրայ եւ գիտում, եթէ քարը չարժուեց, դա յաջողութիւն նշան է: Վանի Արքեստան արուարձմանի հիւսային կողմը Չ ցից ապառաժներ կան, ուրոնք կոչուում են «խարս ու փեսի քար»: Սովորութիւն է մանր քարեր գցել այս «խարսու փեսի քար» ժայռի բուժիչ: Ճակա 3—4 մետր բարձրութեան վոքը խոսուների մէջ: Եթէ 1—2 անգամ գցելիս, յաջողուում է բուն խոսուչի մէջ գցել, հաւատում են, որ ուխտը կը կատարուի: Նոյն Վասպուրականում՝ ներքին կարկառի ու Կեցանի միջեւ բարձրացող Սինեղըր լերան գագաթին կայ ուխտատեղի՝ մատուռ, որ բաղկացած է իրար վրայ շարուած քարերից: Ուխտաւորները մոմ են վասում ապա մէկ քար են գնում ճոճքի (յակուրջի) մէջ, որ կախուած է երկու հանդիպակաց քարերից. եթէ ճոճքն ինքներին չարժուեց, ուխտը կատարուելու է:

Երկրագործական կեանքը, որ սամբուղջովին ենթակայ է բնութեան ուժերին, անշուշտ սերտ աղերս էր ունենում այն հաւատալիքների հետ, որոնց մասին ակնարկի ենք վերը: Բնութեան պատահարների՝ հեղեղի, կարկտի, քամիների, երաշտի, անասունների ժանդախտի եւ այլ գէպերուում վասպուրականի ժողովուրդը եկեղեցական ծէսով օծել էր տալիս մի խաչքար եւ կանգ-

նեցնում պատուհասի վայրում աչքի զարնող տեղ։ Այդ խաչքարերը կոչում են «ցաման խաչ»։ Սակայն լինում են նաև խաչքարեր, որոնք յայտնի են տեղի ունեցած արհաւիրքի անունով։ Այդպիսի խաչքարերից յայտնի են կարկուտ խաչը Վարագի վանքի տրւամտեան բլրի վրայ, Փորովայ Խաչը, որ Այգեստանի ու Վարագի միջեւ բաց կանդնեցրած է փորեաղա կոչուած սարստիկ քամիների դէմ։

Գանձակի գաւառում սաստիկ երաշտի ժամանակ ընտրում են երկու մարդ եւ մէկ քահանայի հետ ուղարկում են Արթենա կոչուած սարը, որտեղ սրանք Արթենա անունով յայտնի գերեզմանից վերցնում են մէկ քար ու փաթաթելով մետաքսէ թաշկինակների մէջ բերում են խորհրդաւոր հանդիսաւորութեամբ։ Ժողովուրդը եկեղեցական թափորով դիմաւորում է այդ քարին եւ, աննելով եկեղեցի, դնում է սեղանի վրայ։ Հետեւեալ օրը աւագ քահանան զրկում է այդ քարը եւ խաչվանով, քահանայական դասով ու մեծ բազմութեամբ դնում է դէպի այգիներն ու արտերը, թափոր անում եւ հանդիսաւոր կերպով այդ քարը նետում են որեւէ ջրի մէջ։

## Ի.

Վերը արծարծուած նիւթերից երեւում է, որ հայ ժողովրդական հաւատալիքներում պահպանուել են Հոգեպաշտութեան այն հետքերը, որոնք ցոյց են տալիս, թէ մեռեալի հոգին փոխանցում է մարդկային մարմնից քարի մէջ։ Սակայն ժողովրդական այդ հաւատալիքներում պահպանուել են նաև այլ տեսակի հոգեպաշտական հետքեր, որտեղ հոգին ո՛չ թէ տեղափոխուում է քարի մէջ, այլ ինքն մարմնանում է քարի, քարանում է։ Անարարակոյս այդ էլ քարէպարեան հաւատալիքների մնացորդ է, ինչպէս հաւատաւում է Աւարալիխայի վայրենի ցեղերի մէջ զոյտթիւն ունեցող նոյնանման հաւատաւով։

Մեր ժողովրդական հաւատալիքը քարանալու մասին, ինչպէս գա արտայալում է ներկայումս, անչուշտ շատ է փոփոխուել եւ կրում է իր վրայ ակներեւ քրիստոնէական աղքեցութիւն։ Այսուղ ո՛չ թէ հոգին, այլ կենդանի արարածի մարմինն է քարանում, ինի նա մարդ, մինի անսունի պայունում է ունեցող նոյնանման հաւա-

րար Աստուծոյ բարկութեան, որեւէ անէծքի հետեւանքով, կամ մողական ու կախարդական ներգործութեամբ եւ կամ վերջապէս չենց քարացած էակի բաղանքով։ Յիշենք Մովսէս Մորենացու աւանդածը ժողովրդական առասպելներից Շամիրամի քարանալու մասին։ «Եւ Շամիրամ՝ քար առաջին քան զիփորէ», մի առասպել, որի մնացորդները պահպանուել են Վասովուրականում «Ճամփարի» եւ այլ մի քանի քարերի հետ, որոնք կապուած են Շամիրամի անուանը։

Հայարնակ բոլոր գաւառներում կարելի է հանդիպել այլպիսի հաւատալիքների հետ աղերս ունեցող քարեր, ժայռեր։ Սովորաբար այդ քարացածները, միաձեւ կրկնութեամբ, ներկայացնում են միշտ կամ քոյլը ու եղբայր, կամ հարս ու փեսայ, կամ սոսկ հարս, կամ հովիւ իր ոչխարենքով, կամ ոճ ու վիերամակ իր ուղտապանով, կամ օճ ու վիերամակ իր ուղտապանով, կամ աճ ու վիերամակ իր ուղտապանով, կամ աճարկաները, գլխաւորապէս մարդու տնտեսական կեանքի հետ առնչութիւն ունեցող, ինչպէս սայլ, ցորենի ոէկ, հացի շտեմարան եւ այլն։

Թուենք բնորոշ մի քանի օրինակներ։ Վասպուրականում Շատուան գիւղի հիւսիսին զարդարի վրայ կայ մարդածեւ մեծ քար, կոնակը ուռած։ Բայ աւանդութեան մի աղջիկ փոքրիկ եղբօրը շալակած, գնալիս է եղել, քրդերը սկսել են հետապնդել եւ նա Աստուծոց խնդրել է քար կտրուել, որպէս զի քրդերի ձեռքը չընկնի։ Նրա խնդիրքը կտարուում է, եւ նա իր եղրօր հետ միասին քարանում է։ Նոյն Վասպուրականում Ասոնու լերան վրայ ցոյց են տալիս հովուի ու նրա քրոջ քարացած մարմինները։ Դարձեալ Վասպուրականում վանի հիւսիսային կողմը երկու ցից ապառաժներ կան, որոնք իրը թէ քարացած հարս ու փեսայ են։ Այս «խարս» ու փեսի քարի» մասին պատմուող ժողովրդական աւանդութիւններից առաջ բերենք միայն հետեւեալը։ մէկ երիտասարդ ու մէկ աղջիկ ծնողների կամքին հակառակ եկել են այսակի մէհեանը արեւածագութիւնը յետու մարմինը է իր վրայ ակներեւ քրիստոնէական պէտք հարացնում, ինի նա մարդ, մինի անսունի պայունում է ունեցող նոյնանման հաւատալիքը է ունեցող նոյնանման սովորա-

շեշտն են պարունակում, որ քարացումը տեղի է ունեցել՝ հակառակ ծնողների ամուսնականալու հետեւանքով։

Քարացած հարսի մասին կարող ենք յիշառակել Գողթան գաւառի Վանանդաձորում եղած «Հարսի քարը» (գեալին դաշ) սարի գաղաթին։ Այդ քարին վերաբերեալ տւանդութիւնն ասում է, թէ մէկ հարս զլուխլուանալիս է եղել, երբ յանկարծակի վրայ է գալիս սկեսրայրը։ Հարսը ամօթից քար է կարում։ Մի այլ հարսնաքար կայ Տաթեւի վանքի հարաւային կողում թուռի անունով մօտ։

Աւելի շատ հանդիպում են քարացած հովիւներ։ Վասպուրականում յայտնի են՝ Այնակա հովիւն իր չնով ու ոչխարներով — վարագայ լերան հիսխային կողմը, կողրանց գիւղի մօտ, ապա «Հովիւի քարը» — վերին Խոշապի Պահանց գիւղի մօտերքը, եւս «Հովիւի քար» — Առնոս լերան լանջին Սոքառ Ծափանց գիւղերի միջև, վերջապէս» «քարացած հովիւ» — Պատականց գիւղի արեւելեան կողմը։ Այդ բոլոր հովիւներն իրենց ոչխարներով հանգերձ քարացել են անէծքների հետեւանքով։

«Հովիւի քարերին» շատ նման են ուղարքի եւ ուղտապանների քարացումները։ Յիշենք Մշոյ գաշտի Նեմրութ լերան «Նեմրութի գեւերը», որ այլապէս նաեւ կոչում են «Բելի ուղարք եւ ուղտապաններ»։

Քարացած օձեր ու վիշապներ նոյնայէս համատարած են։ Լոռում Արդուի գիւղի մօտ «Օձի պորտ» անունով ահադին քարաշերտ կայ, որին ժողովուրդը ուխտ է գնում. ըստ աւանդութեան Օհան Օձնեցին է անիծել ու քարացրել այդ երկու օձ-իշխապներին։ Նորբայապիտի գաւառումն էլ կան վիշապաձեւ քարեր։

### Ը.

Ներկայ տեսութեամբ փորձ արինք՝ աղպագրական նիւթերի հիման վրայ բայ կարելին լուսաբանել քարաքակրթութեան պատմութեան գրուագներից մէկը, որ վերաբերում է նախապատմական Հայաստանի քարէ գարեան շրջանին։ Այստեղ մենք դիտմամբ առ այժմ չօգտագործեցինք նոյն դարաշանին, գիլխաւորապէս նորաքարայինին (նէսլիքախին), վերաբերեալ տուեալները, որոնք լոյս աշխարհ են հանուել Հայաստանի հնագիտական պեղումներից, ինչպէս եւ

Արագածի լանջերում եւ այլուր յայտնաբերուած բազմաթիւ մեզալիտեան արձաններից։ Այդ վերջին տեսակի նիւթերը, որպէս հետեւանք մէծ մասամբ անկանոն, դիպուածական հնագիտական որոնումների, դեռ եւս խիստ անբաւարար, աղքատ առեւելուած, ուսումնասիրուած չեն։ Իսկապէս այդ տուեալները վերաբերում են սոսկ քարէ գարեան շրջանի նիւթական քաղաքակրթութեան, որ գուրս է գտնուում ներկայ յօդուածի շրջանակներից ու առաջարկուած նպատակից, այն է՝ պատերացնել այդ դարաշրջանի մտաւոր-հոգեւոր կեանքի միայն մի քանի էջերը, որոշ կողմերը։


Ահա այդ առաջադրած նպատակին իրօք մէծ ծառայութիւն են մատուցանում մէր հարուստ աղղագլական նիւթերը։ Արանց մէջ պահպանուել են հետքեր, որոնցից մէկնելով հնարաւոր է գառնում ո՛չ միայն արտարերել ժողովրդական արդի հաւասարիքների մէջ պարունակուող հոգեպաշտական աշխարհը, այլ եւ որոշ չափով մէր մտապատկերներում վերականգնել նախապատմական Հայաստանի աղքած մտաւոր-հոգեւոր կեանքը, թափանցել երկար ու ձիգ դարերի թանձը մշուշով պատած առեղծուածային, անծանօթ մի բնագաւառ։

Աւելին կ'ասենք։ Մեր արծարծած աղպագրական նիւթերի մէջ նոյն իսկ նկատիի են, ինչպէս վերը քանից ընդգծեցինք, այն ուղիներն ու աստիճանները, որով ընթացել է քարագրական հոգեւոր քաղաքակրթութեան պատմական զարգացումը հոգեկոլաշտական մտապատկերից զէսի Պատիշտառական աշխարհայեացքները, որոնք աղա իրենց հերթին առգործել են հեթանոսական ու այնուհետեւ քրիստոնէական կրօնների պատմագրներով<sup>1</sup>։

Երեսական պատմուածիա:

Խ. ՍԱՄՈՒԵԼԵՍԻ<sup>2</sup>

(Վեղիչ.)



<sup>1</sup> Այն յօդուածի համար օգտագործած աղպագրական կան նիւթերը քաղել ենք դիմաւորապէս Ե. Լալյուհանի հաւաքածուներեց, լցու տեսած «Ազգագրական հանդիսից ըսլը հատարներում» այնու հետեւ Գ. Ե. Արուանձնահանի երերից։ Բացի այդ՝ օգտագել ենք. 1. «Բնիքուից հանդիսից», 2. «Կազմի», 1895 թ., Էջ 351—358. 3. «Արձագանք» 1893 թ., թ. 142. 4. «Արարատ» 1889 թ., էջ 445—466, 591—603. 5. «Մշակ» 1899 թ., թ. 42. 6. «Լուսաց» 1906 թ., թ. 3. 7. «Սборник материалов по описаниею местностей и народного быта Кавказа», համ. ֆու.